ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 15.08.2016թ.-ի N 89 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 25.08.2016թ. ժամը 12:00

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 15.08.2016թ.-ի N 89 - Լ հրամանի հիման վրա էլեկտրական սարքերի, գործիքների, նյութերի և պահեստամասերի պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ *«ԲԷՑ-ՊԸԱՊՁԲ-16/42»*

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Կորյուն Մկրտչյան - գլխավոր տնօրենի տեղակալ

Անդամներ՝

Լևոն Ջավադյան - գլխավոր տնօրենի խորհրդական

Լևոն Ադամյան - գլխավոր ճարտարագետի տեղակալ

Վահե Մարտիրոսյան - Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Միշա Բաղրամյան - Իրավապայմանագրային բաժնի պետ

Քարտուղար՝

Հայկ Հակոբյան - գնումների համակարգող

I. Հայտերի բացման մասին

(Կորյուն Մկրտչյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Ալիք-Էներգո» ՍՊԸ՝ 25.08.2016թ., ժամը 10:35-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց19/20, հեռ. 010 20-27-75
- «Գայանե Մնացականյան» ԱՁ՝ 25.08.2016թ., ժամը 10:30-ին, իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Ավան, Նարեկացի 39/16

1.1 Մասնակիցների հայտ պարունակող ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.2 «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար, իսկ «Գայանե Մնացականյան» Ա/Ձ-ն՝ 1-9-րդ չափաբաժինների համար:

1.3 Մասնակիցների գնային առաջարկներն են ըստ չափաբաժինների.

ՀՀ դրամ

Չ/Բ	Գնման առարկայի անվանումը	<<Գայանե Մնացականյան Սերգեյի>> ԱՁ	<<Ալիք-Էներջի>> ՍՊԸ
1	Դյուրակիր թվային օսցիլոգրաֆ	590000	
2	Զոդման և վերանորոգման հակաստատիկ կայան	165000	
3	Լաբորատոր սնման սարք	166666	
4	Իմպուլսային գեներատոր	598000	
5	Լաբորոտոր ավտոտրանսֆորմատոր	756000	810000
6	Հողանցման դիմադրության չափիչ սարք SEW 1820 ER	1315000	1380000
7	Միկրոհմետր (Միկո-1) կամ համարժեքը	3022200	
8	Լազերային հեռաչափ Hilti PD5 կամ համարժեքը	830000	900000
9	Հիդրավլիկ մկրատ	2850000	2160000

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Հաշվի առնելով,որ <<Գայանե Մնացականյան Սերգեյի>> ԱՁ-ի ներկայացրած գնային առաջարկը 7-րդ չափաբաժնի մասով գերազանցում է տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, մասնակցին հրավիրել բանակցությունների գնային առաջարկի նվազեցման նպատակով, որը տեղի կունենա ս/թ սեպտեմբերի 1-ին ժամը 11.00-ին:

բ/ Մասնակիցների հայտով ներկայացրած գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:

գ/ Մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

դ/ Գնման ընթացակարգի 1-8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Գայանե Մնացականյան Սերգեյի» ԱՁ– ին, իսկ 9-րդ չափաբաժնի մասով «Ալիք-Էներջի» ՍՊԸ-ին :

ե/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սյուն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

զ/ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

է/ Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակցությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Կորյուն Մկրտչյան

Լևոն Ադամյան

Լևոն Ջավադյան

Վահե Մարտիրոսյան

Միշա Բաղրամյան

Հայկ Հակոբյան